

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Հեղատեսակ 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՐՈՒՆ
2 քիւ ռեկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Հեղատեսակ 7 «

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Հեղատեսակ 1.50 »

ԿԱՆԵՍԵՐԿ

— 0 —

Ծանուցման տողը
20 սանթիմ



ԻՐԱՎԱԿԱՆ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journa

„Iravounk“

VARNA (Bulgarie)

— 0 —

Редакция
на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

— 0 —

Грнрипнѣс
ѣнѣс гнрипнѣс

ՀԱՅԿԱՍՏԱՆ ԽՆԴԻՐԸ ՔՐԱՆՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Թէեւ երեսփոխան Պարոն Մար- սէլ Սըմպատի խորհրդարանին մէջ թուրքիոյ գործոց վրայ ընելիք հարցապնդումը տասրոյս 15ին որո- շուած էր, բայց Ծովակալ Գալ- եարի հրամանատարութեան տակ պտնուած նաւաբաժնին Արեւելքի ջուրերը մեկնած լինելուն համար նախարարութիւնը ընդունեց ընդ հուպ պատասխանել, Պարոն Տէլ քասէ յայտարարեց թէ պատրաստ է նոյնպէս պատասխանել Պարոն Կօշէնի հարցապնդման նոյն խը- ղրոց վրայ:

Պրն. Սըմպատ հարցապնդեց թէ կառավարութիւնը պարտաւոր է պայծառ բացատրութիւններ տալ խորհրդարանին թուրքիոյ հետ մեր յարաբերութեանց խզման նը. կատմամբ. թէ պէտք է Ֆրանսա- յի ազդեցութիւնը վերահաստա- տել, մանաւանդ այնու զի Հայոց վերջին ընդհանուր կոտորածնե- լուն առթիւ Ֆրանսա անտարբեր քաղաքական դիրք մը բռնելուն պատճառաւ այդ ազդեցութիւնը կորսնցուցած էր: Ֆրանսա այժմ կը քայլէ այդ անտարբեր քողա- քականութեան հետեւանքները: Պրն. Սըմպատ կը զարմանայ թէ թուպիսիքի և Լօրէնտոյի անձնա- կան գործերը կամ մի քանի ուրիշ ընկերութեանց հիւսիսական շահե- ըր պաշտպանելու համար կը խզէ իր դիւանագիտական յարաբերու- թիւնները թուրքիոյ հետ, մինչ դեռ ազգային շատ աւելի կարեւոր շահեր զանց առնուած են, թէ պէտք է այլ հոս արգելուլ կըրկ նուր Հայոց կոտորածին, զի յա- նուն քաղաքակրթութեան այդ կը պահանջուի իրմէն, արգելելով այդ օրինակ կոտորածներ այլ եւս վախ մը չի մնար ապագայ խառ- նաշփոթութեանց:

Պրն. Սըմպատ աւելցուց. «Կը սպասենք իմանալ Արտաքին նա- խարարէն այն բացորոշ յայտարարութիւնը թէ՛ մեր նաւատորմիդը չէ գացած Արեւելքի ջուրերը մի- միայն թուպիսիքի և Լօրէնտոյի

շահերը պաշտպանելու, այլ կո- տորածներու կրկնումը արգելելու: Կառավարութիւնը կարող պիտի լինի այն տանն ըսել մեծ պետու- թեանց թէ 300,000 հայոց կոտո- րածին միակ պատասխանատու եւ գործադրող անձն այն է զոր կը լատարձ իրաւամբ անուանեց «մեծ մարդասպան» և թէ եւրոպական ազգաց պարտքն է այդ անձը սանձահարել որ այլ եւս ուր է մնաս չի պատճառէ այլոց»:

Պրն. Տէլքասէ պատասխանելով Հայոց խնդրոյն նկատմամբ ըսաւ թէ արդէն ինքն, յորմէ հետէ կը պաշտօնավարէ Արտաքին գործոց նախարարութեան մէջ, նկատու- ղութեան առած է Հայոց շահերը, եւ թէ հայերն իսկ, խել մը տ. ութիւններու մէջ, իր այս գործակ- ցութեան արժէքը ճանչցած են. եթէ ինք Ֆրանսայէն դուրս ելած շահերը կը պաշտպանէ, չէ մոռ- ցած նաեւ պաշտպանել երկրին բարոյական շահերը և աւանդու- թիւնները»:

Պրն. Սըմպատ կրկին բեմ ելիւ- լելով ըսաւ որ կարելի է խորհր- դարանը գոհանալ Պրն. նախարա- րին բացատրութիւնէն, բայց ինք անբաւական կը գտնէ և հետեւա- բար ոչ համոզիչ. թէ ինք պար- տի խոստում ստանալ կառավարու- թիւնէն թէ քանի որ Ֆրանսական նաւատորմիդը թուրքիոյ ջուրերը ղրկած է, պէտք է չվերադարձնէ զայն մինչեւ որ համաձայնելով միւս մեծ պետութեանց հետ, Հա- յոց վիճակին բարեփոխութիւնը հաստատուի. (ծափահարութիւն):

Պրն. Տընի Կօշէն կրկնեց նոյնպէս թէ Պրն. նախարարը պէտք է աւելի ո- ռոշ բացատրութիւններ տալ խնդրոյ տակ եղած հարցին նկատմամբ, կուզէ գիտնալ թէ ինչու չի պատ- րաստուիր յիշատակագիր մը հը- րաւիրելու համար միւս պետու- թիւնները Պէրլինի դաշնագրու- թեան յօդուածները գործադրելու:

Պ. Տէլքասէ կրկին բեմ ելնելով պատասխանեց թէ ինք կառավա- րութեան գաղափարներ պատրաստ է ծանօթացնելու հայկական ինդ- րայն նկատմամբ, թէպէտ և ինք այնպէս կը հատար թէ իր բա-

ցատրութիւնները ապագայ թուա կանի մը պահուած լինելը ըսած է խորհրդարանին: Թէ շատ կը զարմանայ քննադատական կեր պին վրայ, մանաւանդ անոնց նկատմամբ որք դրամական խնդ- րոց առթիւ յարաբերութեանց խզումը կը քննադատեն, միջդեռ ամբողջ աշխարհ անտարբեր մնաց հինգ տարի առաջ հայկական կո- տորածներու ժամանակ, թէ ինք միշտ ջանագիր եղած է Ֆրանսա- յի աւանդութիւնները պահպանել, թէ մանաւանդ Արեւելքի գործերը լաւ ուսումնասիրած է, թէ կրէ- տական խնդրոյ կարգադրութեան տանն ըրած է Ֆրանսա ինչ որ կը պահանջուէր: Թէ 94, 95 և 96 թուականաց ժամանակ պատահած կոտորածները չը կրկնուելու մի- ջոցնիր խորհած էր. դեռ անցնալ տարի Ֆրանսական նաւատորմիդի մի մասը Աղէքսանդրէի առջեւ խարսխեց զի վտխ կար թէ նոր կոտորածներ տեղի պիտի ունե- նային ազգը պէտք է երախտա- պարտ լինի կառավարութեան, ինձ կը հարցնեն թէ ի՞նչ մտադրու- թիւն ունիւ ընելիք ապագային. Հայաստանի մէջ կոտորածներու պատմութիւնը յաճախ այնքան ճիշդ չեն, բայց, դժբաղդաբար, ճիշդ ըսելու համար, կը լինին կո- տորածներ. սեպտ. 4 թուականաւ մեր հիպատոսներէն հասած տե- ղիկագրերը կապութիւնը Հայաստա- նի մէջ խիստ սղբալի կը ներկա- յացնեն: Սա ճշմարիտ է թէ այդ երկրի մէջ գտնուող ցեղերու մէկ մէկու դէմ ունեցած թշնամութիւն- ները խիստ դժուարութիւններ կը յարուցանեն տեղային կառավա- րական վարչութեանց դէմ, բայց պէտք է որ թուրքիա ցոյց տայ թէ կարող պիտի լինի հաւասա- րութիւնը պահպանել առողջ մէջ: Իսկ գաղով իմ նախկին ընթացքը երաշխիք մըն է իմ ապագայ բռ- նելիք ընթացքիս. թէ ի Մակե- դոնիա և թէ ի Հայաստան: Հան- յապետական կառավարութիւնը պիտի շարունակէ իր ձայնը լսելի ընել տալ ընդդէմ հարստահարու- թեանց և ի նպաստ արգարու- թեան և դաշնագրութեանց կէտ առ կէտ գործադրուելուն: Այս է

ամենահարկաւորը թէ՛ թուրքիոյ շահուց և թէ աշխարհի խաղաղու- թեան համար. բայց սա պէտք է գիտնալ թէ միակ Ֆրանսան չէ որ ստորագրած է այդ դաշնագրի- ներն, նա չէ կարող առանձին գործադրել տալ զանոնք. Ֆրան- սա իր պարտքը կը կատարէ ընդ- հանուր համաձայնութեան մէջ, թէպէտ և չի մոռնար նաեւ այն բարձր պարտաւորութիւնները որք կը մնան իր վրայ:

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՄՈՒՆԻ ՄԷՋ

«Ռէյդէր» Կ. Պօլտոյ թղթակիցը կսէ թէ Էրզրումէն եկած նամակ մը հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ Մուշի կացութեան վրայ, որուն նկատմամբ վերջերս սոսկալի տեղե- կութիւններ տարածայնուեցան: Եթ Ներքորդ զօրաբաժնիի հրամանատար Մէհմէտ Ալի փաշան չորս վաշտ հե- տեւակ և մէկ դուշն ձիաւոր զօրքե- րու գլուխ սեպտ. 20ին առնենները Մուշ հասաւ: Նախապէս հետեւակ զօրքերու երկու վաշտ Մուշ երթա- լու հրաման ստացած էին: Այս զօր- քերէն մաս մը քողաք եւ մաս մըն ալ չրջակաները տեղաւորուեցան, և մնացածները Սասունի լեռան ստորոտի արեւելք ել. արեւմուտք գտնուող գիւ- ղերուն մէջ ցրուեցան: Զօրքերէն շատերը վրաններու տակ կ'ապրէին, բայց քիչ մըն ալ դիւղագիներու քով տեղաւորուեցան: Հրամանատարը իր կեդրոնատեղին հաստատած էր Մուշի մէջ, ուր իրին միացաւ Պիլիլիսի վա- լին: Հիւանիւ պէյ, որ ստիպուած էր վերջերս Պիլիլիս երթալ Մուլիսի գահակալութեան տարեգարձը ստնելու, նշանայինի զուգադիպութեամբ մը վանի ուստական փոխ հիւպատոսը՝ Մր. Ալեքս. Թումանյանին՝ Մէհմէտ Ալիի հասած օրը՝ Մուշ հասաւ: Մր. Թումանյանի Հայ թագին մէջ եկեղե- ցիին մօտ տուն մը վարձեց, և այս բանը այն համոզումը տուաւ թէ նը- պատակ ունէր երկար ժամանակ հոն մնալ: Լուր մըն ալ կը պարտէր թէ Ռուսիան նպատակ ունէր փոխ հիւ- պատոսարան մը հաստատել այս կող- մերը, սակայն այս յարը չը հաստա- տուեցաւ: Սյն իրողութիւնը՝ թէ մեծ պետութիւններէն և ոչ մէկը Պիլիլիս նահանգին մէջ որ և է ներ- կայացուցիչ ունի՝ մեծապէս ցաւալի բան մըն է: Հիւպատոսի մը կամ փոխ հիւպատոսի մը ներկայութիւնը միշտ աստիճանով մը քրիստոնեայ ժողովը- դին ապահովութիւն կընծայէ և աւ- տիճանով մը ճնշում կը բանեցնէ կա-

ապագայութեան վրայ :
Վերոյիշեալ բարձրաստիճան պաշտօնեաներու եւ շատ մըն ալ զօրա-գնդերու հասնելը՝ Մուշի եւ չորա-կայքի մէջ տեղի ունեցած ռմբակներուն եւ սպանութիւններուն առժամանակ-եայ դաժար տուաւ որ վերջերս խիստ չափաւոր վրայ էին : Օրինակի համար միայն շարժուան մը մէջ, օգոստոս 14-21, քսանութը Հայ - էրկմարդ կրն եւ մանուկներ սպաննուած էին Մուշի գաւառի գիւղերուն մէջ : Հա-կառակ անհամար ռմբակներու մէջ հատ թուրքի քիւրդ չեն ձերբակալուած, եւ կառավարութիւնը քրիստոնեանե-րու Մահմետականներուն գէմ քրած գանդատին ուշադրութիւն չէր դար-ձնէր : Միւս կողմէն, որովհետեւ կը հաստատուէր թէ հայերը քիւրտ մը սպաննելու յանցանքը դործած են : 50 էն աւելի բանտարկուած էին : Այս խնդիրը վերջին աստիճան հետա-քրքրական ըլլալուն կարծէ մանրա-մասնօրէն պատմիչ :
Անհետացող քիւրդը, Շէրիֆ աղա, Գոգանը կոչուած զօրաւոր ցեղին կը պատկանէր, հանրածանօթ համբաւ մը ունէր եւ շատ մը ռմբակներ կը վերագրուէին իրեն : Կարնան սկիզբ-ները անհետացաւ եւ քանի մը շա-բաթ վերջ իր դիակը Մողուներ գիւ-ղի քով դաշտի մը մէջ գտնուեցաւ : Գիւղին մերձակները գտնուելը անոր բնակիչներուն զայն սպաննելու յան-ցանքով ամբաստանելու բաւական պատճառներ տուաւ եւ հետեւաբար 50 առաջնակարգ Հայեր ձերբակալ-ուելով Մուշ բանտարկուեցան :
Ասով ալ չը բաւականանալով՝ Շէ-րիֆ աղայի ձեզը մտադրեց մասնակի վրիժառութիւններ ընել, տունները թալկեց, եկեղեցիներ եւ շատ մը տու-ներ այրեց : Բնակիչները, որոնցմէ յարձակումի տեսն երեք կամ չորս հատ միայն սպաննուած էին, ցրուե-ցան եւ հիմայ գաւառին այս ու այն կողմը կը պտտին բոլորովին ազա-տացած : Շէրիֆ աղայի մահուան գաղտնիքը սակայն քանի մը օր ա-ռաջ պարզուեցաւ եւ հարկ չկայ ըսել թէ Մողուներ տարաբաղդ գիւղացի-ները անոր մէջ բնաւ մատ չունէին : Եսթեր անունով հայ աղջիկէ մը սպան-նուած էր ան, զոր բռնաբարել փոր-ձեր էր : Աղջկան երկու եղբայրները իրենց քրոջ օգնէր էին դիակը դաշ-տին մէջը պահելու, ուր գտնուեցաւ : Կառավարութիւնը Եսթերի դէմ որ եւ է միջոց ձեռք չառաւ, որովհետեւ յայտն ընելով պիտի ընդունէր որ իր յստեւ բանտարկեալները ապօրինի կերպով վար դրուած են : Այս բան տարկեալներէն իսթը հատը սպան-նուեցան :
Սյս կողմերու վրձակին նկատմամբ տարածաշրջանում սոսկալի տեղեկու-թիւնները աչքի առջեւ ունենալով՝ կառավարութիւնը Մուշ պատուիրա-կութիւն մը զրկեց սխալ հանելու այն լուրերը թէ Հայերը թուրքերէն եւ քիւրդերէն կը հալածուէին եւ կը ճնշուէին : Հայերը գաղտարան կը կան-չեն եւ կը բռնադատեն որ մահմետա-կաններու կողմէ գործուած ռմբակները իրենց ստանձնեն : Յանձնարարութե-ր այս կերպով կարող եղած է Հայերը իրենց կրօնակիցներէն հալածուելու բազմաթիւ ապացոյցներ հաւաքել :

ՀԱՐՑՈՒՄ ՍԸ

Պատ. Հոգաբարձութեան վար-նայի Ազգ. վարժարանաց

Տաճկաստանի մէջ իր ազգին ո-րոշ զոհողութիւններ ընող օրիորդ մը թուրք կառավարութեան խրս տուիւններ յանձնած ըլլալու ծան-րածանք ամբաստանութեան տուի գտնուող Լեւոն Սարգիսեան անուն

անձը ցաօք սրտի կը տես-նենք թէ Ազգ. վարժարանի մէջ ցարդ պաշտօն կը վարէ :
Այդ ամբաստանեալը արդէն իր իսկ հրապարակային խոստովանու-թեամբ մատնութեան նամակի մը գոյութիւնը չի կրցաւ ուրանալ :
Յայտնի վկաներ հրապարակաւ կը պնդեն թէ այդ քստմեղիքայ-լը առնուած է եւ նամակին հեղի-նակները իրենց նպատակին հա-սած են :

Նոյն իսկ Լեւոն Սարգիսեանի գէմ եղած բոլոր ամբաստանու-թիւնները ու վկանները եթէ չեղեալ նկատենք, կրկին նա մեղաւկցու-թեան ինքզինք չի կրնար ազատել քանի որ ինք հրապարակաւ խոս-տովանեցաւ թէ 1899ին իր մէկ պաշտօնակցին մատնութեան նա-մակ մը խմբագրած ըլլալը գիտ-նալով երկու տարի լուռ մնացած էր, թողով որ, հակառակ իր պաշ-տօնի պահանջին, ազգին մատաղ սերունդը անկէ թունաւորուի :

Բայց ամբաստանողը կը պնդեն թէ Լեւոն Սարգիսեանի խոստո-վանած մատնութեան նամակը նոյն իսկ իր ձեռքով նամակատուքի ձե-ղուած է նպատակին իրողոր-ծուած է յանձին ինքզինք բայց բարե-կիրթ հայ օրիորդի մը :

Իրաց այս տխուր վիճակին մէջ կը կարծենք թէ ոչ երկրին օրէն-քը, ոչ հանրային բարոյականը եւ ոչ ազգին մատաղ սերունդին բար-ւոք դաստիարակութեան հոգը ստանձնող հոգաբարձութեան մը խիղճը կը ներին որ Լեւոն Սար-գիսեան մը ուսուցիչ մնայ ազգ-վարժարանի մը մէջ :

Արդ կը հարցնենք Պատ. Հո-գաբարձութեան թէ ինչ կը խոր-հի այդ մարդուն նկատմամբ : Ղինք պահել, թէ անմիջապէս պաշտօնանկ ընել : Եթէ պահել՝ ապա կը նշանակէ թէ Հոգաբարձու-թիւնը ինք ստանձնած է Լեւոն Սարգիսեանը արգարացնելու պար-տականութիւնը : այս պարագային պէտք է հայ հասարակութեան բարձրած միտքը հանդուրժեցնող զօրաւոր փաստեր եւ ապացոյցներ հրապարակել, իսկ եթէ պաշտո-նանկ ընել, Հոգաբարձութիւնը ալ եւս ո՞ր օրի կըսպասէ :

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆ

[Մեր մասնաշարքի քրակցէն]
ՍՕՖԻՍ, s. 25 Հոկ. 1901

Աւելի քան տասն օր է որ բա-ցուած է Սօպրանիէն եւ դեռ նը-շանակելի գործ մը չէ տեսնուած, Առաջին մի քանի նիստերու մէջ կատարուեցան խել մը յանձնաժո-ղովներու ընտրութիւնները : Եւ ինչ-նաժողով՝ ընտրութեանց ճշգրտու-թեան, յանձնաժողովներ՝ գահա-ճառի պատասխանին, պիւտճէի, շրջուն, արտաքին գործոց, ներ-

քին գործոց, երեւոյց եւայլն : Եւ դեռ Սօպրանիէին գործունէ-թիւնը քայլ մը չառած, երէկի նստին մէջ փոխ-նախագահը ծա-նոյց թէ այժմեան ազգ. ժողովոյ նախագահ Տիար Իւլ. Կէչով իր հրաժարականը տուած է : Գեռ ժողովոյ խմբակներուն մէջ ու եւ է համաձայնութիւն չէ գոյացած նա-խագահական յաջորդի մը համար : Կ'ըսուի թէ Յանգովիտները կու-զեն ընտրելի ներկայացնել ժողո-վոյ փոխ-նախագահ Վ. Գընչէվ, մինչդեռ աւանակապետականներու ըն-տրելին է Ի. Բ. Թէոտորով : Իբր ընտրելի կը յիշուին նաեւ Մ. Պա-լապանով, (՝) Ա. Յրանկիւս :

Ընդգրկմադիրները նպատակ ու-նին հղեր ընտրելի ներկայացնել սա երեքէն մէկը : Կէնչէրով-Մա-յօր Բաշօ փէթրով, Տ. Կէնատիւկ եւ կամ Մարգով :

Նախորդ օր, ամսոյս 23ին, Լե-րեկոյեան ժամը 6ին երբ Բատումի իր կառավարութեան կեցած էր Կորնա Պանտի կայարանին առջեւ, ուր քարափին վրայ ահագին բազմու-թիւն մը խմուած էր, անկէ քիչ մը վերջը վլատայի կայարանէն մեկնած բեռան շոգեկառք մը գալով կ'ընդհարի կայանի կառա-խումբին, որուն վերջին երկու կառքերը ճանրորդներով լիցու-ն էին :

Սոսկալի բաղնիստի հետեւանօք վախճաններու մի քանին իրարու վրայ կը բարձրանան, մի քանին շարժուիչներ կըլլան եւ միմեաները բոլորովին կաւնորին : Հինգ հոգի վարկենական կը մեռնին, 3 հո-գի ալ վերջէն կը մեռնին, 19 հո-գի ծանր կամ թեթեւ կը վիրաւ-ւորուին, Արկածէն անմիջապէս յետոյ նախարար Պէլիւով մասնա-ւոր շոգեկառքով ահապարկեց եր-թալ գէպի Կորնա Պանտ, օր քա-ղաքիս Արեւմտեան կողմը, տասը քիլոմէթր հեռաւորութեամբ ա-ռաջին կայարանն է Բատումիի գծին վրայ : Յանցաւորք անմի-ջապէս կը ձերբակալուին նախա-բարին հրամանաւ, ընդ օրս վլա-տայի եւ Կորնա Պանտի կայարա-նաց պետերը : Հետեւեալ առաւօ-տուն իշխանն ալ անձամբ իր հե-տեւորդներով փութաց երթալ ար-կածին վայրը : Ահագին թուով մարդիկ, պաշտօնեաներ եւ թղթա-կիցներ եւ նոյն իսկ խմբագիրներ մեծ հետաքրքրութեամբ այցելե-ցին Կորնա Պանտի կայարանը :

Շատ տխուր տեսարան մը կը պարզուէր հոս ասոնց առջեւ : Վա-խճաններու կոտորուածներ, թա-փուած արեան թարմ հետքեր, մարդկային մարմնի մասեր, հոս գլուխ մը, հոն՝ ոսկոր մը, ասդին ճգնուած կին մը, որուն դէմքը այնչափ տափակցեց է որ անկա-րելի է մարդկային դէմք համարել եթէ իր զգեստները եւ մազերը չի վկային, անպիսի ծաղկահասակ աղ-

(՝) Մ. Պալապանով նախագահ ըն-տրուեցաւ :
Մ. Խ.

Ղիկ մը տրեւնաթաթու եւ անկե-ղան : Ասդին անդին տարտղնուած հացի, կողովներ, շիշի եւ ուրիշ ուտելիքներ : մոմազօծ կտաւի մը մէջ փաթեցուած վաճառականական տոմարներ եւ 3000 ֆր. դրամ. գծին եզերքէն մինչեւ 10-20 մեղր հեռուն ցատկած շատ մը իրեղէն-ներ եւ կտորներ : Վիրաւորները նոյն իրիկունն իսկ բարձակալով փոխադրեցին «Բլէմանիթին» հի-ւանդանոցը, ուր պէտք եղած դարմանները խնամքով կը տը-րուին :

Մարդ չի կրնար տեսնել եւ չը լուրերի, խոյնի թական վնասը ոյ 50,000 ֆր. կը հաշուուի, ալ մարդկային արարածները որոնց արտաճիկ եւ աղիղորմ վիճակը ամենուն գուլթը եւ կարեկցութիւ-նը կը շարժեն :

Այս առթիւ լրագրիք շատ կը քննադատեն կառավարութիւնը, նամանաւանդ շինութեանց եւ հա-ղորդակցութեանց նախարար Պէ-լիւովը որ բանիւրուն եւ գործէ հասկցող մարդիկ պաշտօնէ հանե-լով, անգործ, անճարակ եւ «Խրե» մարդիկները պաշտօնի դրած է : Արդէն ժամանակէ մը ի վեր է որ տեղական մամուլ մէջ կը ծածուկե-րայ խնդիրը եւ մասնաւորապէս երկաթուղիներու յոռի վարչութիւ-նը եւ ժամանակի պահանջներ չը համապատասխանող դրութիւնը մատնանիշ կընէին եւ առ այս կա-ռավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէին : Այժմ այս ցաւովի ար-կածը կուգայ իրաւացի կնքպով ուժ ալ բոլոր այս կարգի բամ-բասնաց եւ քննադատութեանց :

Մեր ազգային շրջանին մէջ ալ դրութիւնը դեռ բարեփոխուած չէ. եկեղեցիներ եւ վարժարաններ վիճակը նոյն կը մնայ, այսինքն երեսի վրայ : Առժամային խնամա-կալութիւնը դեռ խօսքէն գործի անցած չէ. միայն մի քանի տե-ղեր եւ Պատրիարքարանի նամակ-ներ գրուած են որոնց պատասխան մը ցարդ ստացուած չէ : Բայց միեւ իր կարծենք թէ միայն այս չափով գործը զուլս չեղիր : Խը-նամակալութիւնը դեռ իր տրա-մադրութեան տակ սանթիմ չու-նի : անգործագրերը ստորագրե-ցին որ ժողովուրդէն ամսատուր-քերը հաւաքեն, որով գոնէ կա-րելի ըլլայ բաժանայ եւ վարժուհի բերել տալու նախակաւան եւ ան-հրաժեշտ ծախքերը հոգալ : Ինչ-չո՞ւ կեցած են եւ ո՞ր վարկեանի կըսպասեն գործադրութեան ձեռ-նարկելու համար : Գալով ժողո-վարդին կարծես ամեն բան մոռ-ցած է. մենք ալ հայ ենք, եկե-ղեցի ունինք, վարժարան ունինք որ պէտք է բացուի : Բնաւ հո-գեւորն չէ : Թմրութեան վերջին աստիճանին հասած են : Որչափ որ խնամակալութիւնը պաշտօն ստանձնած է կարելի եղածին չափ գործերը կարգի մը բերել, միեւ-նոյն ժամանակ մեր ալ ժողովուր-դին պարտականութիւնն է չահա-գորդաւոր մեր ազգային կեանքով եւ մեզի վերաբերեալ մասը կա-տարելու փութալ, հակառակ պա-րագային ո՞վ պիտի ըլլայ տուժո-ղը, չէ՞ որ նորէն մենք :
Արմենակ

ՎԱՌՆԱՅԻ ՈՐԲԱՆԵԱՄԻ
ԵՐԵՎԱՆԻ

Արդէն նոյն օրական պարտականութիւնս էր երկույթի մասնակցիլ . բայց դեռ մոռցած էին անցեալ տարուան Թաղ. Խորհուրդի ի նպատակ Ազգ. վարժարանի սրբուած ներկայացման թղթուցած անախտութեւ գուման ապաւորութիւնը . բնականաբար պիտի կասկածէի թէ նոյն անկարգութիւնը կրնայ պատահիլ նաեւ որքանաման մասնականը քանի որ տեղեկացած էի թէ տոմսակները սպառած են եւ չսփէն աւելի բազմութիւն պիտի ըլլայ . Սեանքալի փողոցի դռնը զարդարուած էր պուլկարական եւ ռուսական դրօշակներով ու լապտերներով : Երկույթի պիտի սկսէր ճիշդ ժամ 9ին , ժամը գեռ ու թիւ էր գրեթէ հանդիսականաց մեծ մասը իրենց տեղերը գրաւած էին :

Սրահի դռներն կից սեղանի մը զըլուխ նստած էին Գործ. ժողովոյ անդամներէն երեքը—մէկ Տիկին—, որոնք մնացած շատ աննշան տոմսակները կը վաճառէին , իրենց քով ուրիշ սեղանի մը զըլուխ նստած էին երկու Տիկիններ , իսկ սեղանին քով կեցած էին երկու փոքր տղիկներ , որոնք տիկիններու հետ սեղանին վրայ երկու մեծ ափսէներու մէջ գրուած թարմ ծաղիկներու փնջիկներ անխառնաբար ներս մտնող հանդիսականներուն կը բաշխէին «որբերուն նուէրն է» ըսելով . հանդիսականները փնջիկները ընդունելով ըստ կամս իրենց նուէրները ծաղիկներու քով գրուած պնտակին մէջ կը ձգէին : Մէկ փնջիկին փոխարէն հինգ ֆրանկ ձգողն անասնաւ հետաքրքրուեցայ , այս ընտանիքը ամբողջ 31 ֆր. վճարած էր այդ գրքերը 5 աթոռի եւ ծաղիկի համար . մանաւանդ որ առաջնակարգ հարուստ էրէն չէր :

ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ԷՋ ՄԸ

ԼԵՀԱՅԻՈՅ ԱՊԱՏԱՄԲՈՒԹԻՆԻՐ

(Շար. Ասխորդի քիշէն եւ վերջ)

Երկու մեծամեծ սկզբունք ռուսականութիւն եւ ազգութիւն կը մրցէին իրարու հակառակ եւ այս երկու հակառակ ուղիներու արտայայտութիւնը էին Աղեքսանդր Բ. ի նման կայսեր կենաց զէմ եղած երկու դաւեր : Առաջինը կայսերական պալատան պարսէզին զբան քով Գարաքողով անուն ռուսէ մը որ երեք ատոճանակի հարուած պարպեց կայսեր անձին զէմ , բայց իւր թիւն ցնցումն ընդունելով Քոմիսսարով անուամբ երիտասարդէ մը , հարուածը չեղեցան եւ կոյսը ազատեցաւ , որ Քոմիսսարովի ազնուականութիւն տուաւ (*) : Երկրորդ

(*) Առ Սղեքսանդր եկած ռուսականացութեանց մէջ ամենէն նշանաւորը եւ զարմանալին երեւցաւ Միայեալ Նա-հանգաց ռուսականութիւնը ի ձեռն հանդիսաւոր նուիրակութեան մը , որուն զըլուխն էր Պ. Ֆոքս , ենթապաշտօնեայ ծովային զօրութեան , որ նախորդողով մը եկաւ ի Բոննիգատ եւ որոյ համար երկու ամսուան չափ մեծ տօներ կատարուեցան ի Ռուսաստան : Ամերիկացիք մասնաւոր ռուսականութիւն մը ըրին նաեւ այն 2 միլիոն գիւղացիներու զօրս ազատիւր էր Ռուսաստան :

Հանդիսականներ իրենց գլխարկ , գաւազան եւն հանդերձապահին յանձնելով թատերասրահի գուման ներս կը մտնէին : Երկու գումաներու քովերը իրր բարապան կեցած էին չորս գաւառացի հայեր իրենց երկրին տարազովը . ժողովորդը իր տոմսակները մասնաւոր տոմսընկալներուն ներկայացնելով ներս կը մտնէր , հինգ վեց հիւրընկալներ արդէն պատրաստ կեցած պատուաւոր կերպով եւ քաղաքավարութեամբ հիւրերը կառավարողէին իրենց մասնաւոր տեղերը :

Ժամը իննին Տօտեցած էր , սրահը բոլորովին լեցուած էր . այդ անագին բազմութեան մէջ ազնուիկ եւ խլրառում մը չկար :

Բեմին ճակատը գրուած էր Բ. Ֆէրտինան Իշխանի մեծագիր պատկերը եւ երկու կողմը կը ծածանէր պուլկարական եւ ռուսական մեծ դրօշակներ : Բեմին աջ կողմը գրուած էր հայկական մեծագիր երկաշունիկ զինանշանը . անոր քովեր գրուած էին Սրբմանի եւ Իզմիրլեանի մեծագիր եւ լայն չըրջանակով պատկերները . Զինանշանի ներքեւ զետեղուած էին որքանամի սաներու եւ Վառայ ու Սեբաստիոյ ամբողջ որբերու սեւ չըջանակով պատկերները , որոնց վրայ ի նշան սգոյ ձգուած ձերմակ շղարշը սեւ երկգով կապուած :

Բեմի ձախ կողմը գրուած էր Լորիս Մելիքովի , Տէր Ղուկասովի եւ այլ նշանաւոր հայերու պատկերներ :

Գործ. ժողովոյ անդամուհիք , անդամներ եւ Ընդհ. դիւանի անդամներ բոլորն ալ իրենց պաշտօնի զըլուխն էին , կը ծառայէին հանդիսականաց հանգստութեան եւ երկույթի կարգապահութեան : Ստոյգ աղբիւրէ սեղեկացայ թէ , Գործ. ժողովոյ եւ թէ Ընդհ. դիւանի անդամները ըստ կամս տոմսակներ գնելով մասնակցած էին երկույթին երկույթին , բայց երբ տոմսակները սպառեցան իրենց աթոռները ժողովուրդին ծախեցին եւ գումաները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ԷՋ ՄԸ

դաւը փորձեց Պէրէզովսքի լեհ երիտասարդը երբ Աղեքսանդր Բ. Բարեկցացած էր լամին 1867 Տիկերական Յուցահանդիսին համար : Աղեքսանդր իր մարդասէր եւ ազատասէր բարութ վշտալի զգացմամբ դիտեց այս արժ. գահութիւնը :

Ունեցաւ նաեւ ընտանեկան մեծ վշտեր յորս մասնաւոր , ի թոքախտէ , նիցցայի մէջ , իր անդրանիկ զաւակին մահը որ արդէն նշանուած էր Տանի-մարքայի Տակմար Իշխանուհոյն հետ : Իր երկրորդ զաւակը Աղեքսանդր թաղաժառանգ անուանելով , կրկին նըշանեց Տակմար Իշխանուհոյն հետ , որոց ամուսնութեան տոթիւ շատ մը ներուամեր եղան յանցաւորաց եւ դարձ արագգրելոց , յորս կային բազմաթիւ լեհեր , որոնք համակերպեցան նոր գրութեանց :

Այս վերջը կ'ունենար 1863ի լեհ ապստամբութիւնը որ ինքնին մեծ եւ յետին թերեւս հարուածը կուտար նոյն իսկ իր սպգութեան , գոգցես անդարձ կերպով դատապարտելով անոր խառնումը , որ ըստ օրէ անյայտանալով , ռուսական մեծամեալ եւ զօրաւոր ազգութեան ծովուն մէջ , իրեն հետ տանելով միտարն լուսկային բազմաթիւ ժողովուրդոց յոյսեր ու բաղդեր :

Պատմ. Հ. Մ. Նոքրիխան



տոմսակներու յատկացեալ պնակին մէջ լեցուցին :

Դեռ վարագոյրը չը բացուած իտալացի երգեցիկ խումբը Տ. Տ. Պապանանի եւ Պէնլեանի միջոցաւ փափաք յայտնեց այդ երեկոյ անձնուիրաբար երգել եւ պարել բեմին վրայ առանց ըստ սովորութեան հանդիսականներէ զրոյս հաւաքելու գործ . ժողովոյ անդամներէն երկուքը—մէկ տիկին— փութացին պաշտօնապէս շնորհակալութիւն յայտնել երգեցիկ խումբին :

Վարագոյրը բացուեցաւ , արդէն շատերու ծանօթ է «Երկու յիսնապետներ» բարոյալից խորը . աւելորդ է ըսել թէ , «Վէսէլ» խումբը յուսացուած էն աւելի լաւ կատարեց իր դերը Վարագոյրներ բացուեցան ու գոցուեցան ժողովուրդի բուռն ծափահարութեամբ . շատերը կարտասուէին , թափաբանին վրայ այնչափ ընականօրէն պարզուած արտաճակիկ տեւսարաններն ազդուելով . ժողովուրդի ծափահարութեամբ Վէսէլ խումբը վերջի վարագոյրէն վերջ կրկին բեմին վրայ երեւցաւ եւ իր շնորհակալութիւն յայտնեց , Երգեցիկ խումբը երեք անգամ երգեց եւ պարեց ռոտունդոստ ծափերու մէջ :

Գործ. ժողովը կրկին վարագոյրը բանալ տուաւ եւ իր անդամներէն երկուքի միջոցաւ պատրաստուած երկու ծաղկեպոնջիկ «Վէսէլ» եւ երգեցիկ խումբերուն նուիրեց :

Երկու վարագոյր զաւելուն եւս վերջացաւ եւ հանդիսականք շատ գոհ եւ լաւ ապաւորութեան ներքեւ մեկնեցան սրահէն :

Պէտք է արդար ըլլալ եւ խոստովանիլ թէ , այդ երկույթի կարգապահութիւն եւ ժողովուրդի հանգստութիւն կը պարտինք որքանամի երկու զիւաններու անդամներուն , որոնք սկիզբէն մինչեւ վերջ իրենց աշխրջութեամբ եւ պաշտօնի գիտակալութեամբ ողի ի լսին շնչասպառ եւ ուշի ուշով հսկեցին կարգապահութեան , առանց փոքրիկ տղմուկի մը անգամ տեղի տալու , որով բոլորովին մեղ մոռցնել տուին անցեալ տարի թաղ. խորհրդոյ տուած ներկայացման մեր վրայ թողած ախուր տըպաւորութիւնը :

Արդէն որքանամի գիւանի անդամուհիք եւ անդամներ լաւ ճանչցուած եւ պէտք եղած յարգանքն ու պատիւը կը վայելին Վառայի հայութեան քով բացի մէկ քանի ստոր արարածներէ , որոնք արդէն իրենց անձնական ցած հաշիւներով , գիւանի մէկ երկու անդամներու զէմ , մերժած էին մասնակցիլ սոյն ամենամեծիւրական գործին : Արդէն որքանամի գիւանի անդամաց Վառայի հայութեան ներշնչած համակրութեան եւ վստահութեան շնորհիւն է որ 900 ֆր. է աւելի հասցի մը եղած է , կարծեմ ցարդ Պուլկարիոյ քաղաքներէն եւ ոչ միայն մէջ ազգային ու եւ երկույթ նոյնչափ հասոյթաբեր եղած ըլլայ , Շատ աւելի հասոյթ պիտի ունենար Որքանամի եթէ երբէք «Սեանքալի» սրահը մեծ լլլար եւ կամ Վառայի մէջ գտնուէր օրինաւոր եւ մեծ թատերասրահ մը : Ուրեմն ինչպէս այդ երկույթ հանդիսականներէն շատեր մասնաւոր շնորհակալութիւն յայտնելով մեկնեցան , եւ ալ կուգամ հրապարակաւ իմ շնորհակալութիւնս յայտնել :

Հետաքրքիր մէկ ըլլալու համար մինչեւ վերջ հետեւեցայ որքանամի քայներուն : Հանդիսականներու մեկնելէն վերջ , որքանամի հրաւիրեց «Վէսէլ» եւ երգեցիկ խումբերը պաշ-

տօնապէս իր շնորհակալութիւնը յայտնելու , որ անձնուիրաբար յանձն առած էին յանուն որբերու սոյն ներկայացումն տալ , Որքանամի երկու խումբերու անդամներուն հրաւրուեց երկուքական զարեջուր :

Ականատես երգողներ միայն կրնան զգալ թէ ինչ քաղցր տպաւորութիւն թողուցին որքանամի եւ երկու խումբերը փոխադարձաբար . հաւանաւանդ ատարագգի խումբին վրայ չափէն աւելի լաւ տպաւորութիւն թողուց որքանամի այդ իրիկուն ցոյց տուած գիտակցութիւնը իր պաշտօնին մէջ պատիւ մը որ ամբողջ հայութեան կը վերաբերի : Երանի թէ մեր ապիկար Թաղ. խորհուրդը ունենար այն զգացումը , եւ որքանամի գիւանի գործունէութիւն եւ ընթացքը աչքի առջեւ . ունենալով զգաստանար եւ գիտնար թէ հանրային գործերու մէջ պաշտօն ստանձգողները ինչպէս կը գործեն :

Մասնակցող

ՏՕՔԹ. Ա. ՇԱՔԱՐԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

Այս համակրիկ բժիշկը 4-5 տարիներէ ի վեր Վառայի մէջ իր զարմանումին ու խնամքին հնթարկուող հիւանդները չափազանց դոնթողած ու իր ծանօթ չըջանակին մէջ իբրեւ . ճարտար բժիշկ , գիտական մարդ , անկեղծ ազգասէր ու խաբարեգործ եւ անբասիր բարոյականի տէր անձնաւորութիւն մը գերազանցապէս յարգուած է քան ուրիշ բժիշկներ : Մասնաւոր քաղաքէս մինչեւ մեկնելու օրը Որքանամի Գործադիր ժողովոյ ատենապետութիւնը այնչափ անձնուիրաբար վարած ըլլալով , ամբողջ Որքանամի անդամաց յարգանքը ու լալ նաճանքը իր հետ տարած է դէպի Փարաւոններու երկիրը : Իսկ իր առողջապահական յօդածներու շարքով , որ անցեալ տարի «Իրաւունք» մէջ երեւցաւ , արդէն մեր հեռաւոր ու մերձաւոր ընթերցողներուն ալ օգտակար նախապայցած է :

Ուստի այս տիպար հայ բժիշկը ջերմապէս կը յանձնարարենք Գահիրէ բնակող մեր ազգակիցներուն , որք իր արհեստին մէջ ունեցած ճարտարութեանց զատ, անոր ուրիշ բարեմասնութիւններէն ալ կրնան օգտուիլ :

Իր հասցէն է՝

ԳԱՀԻՐԷ , Շարա Ապաիւ Ազիզ փողոց , Ապաիւի պահականոցին քով , թիւ 4 :

Հիւանդ կընդունի սմին օր կէսօրէ առաջ , ժամը 9-11 , իսկ կէս օրէն յետոյ՝ 3-5 :

Ուրբաթ օրեր ձրի կը գարմանէ աղքատները :

ԻՐԱՌՈՒՆՔԻ ՊԱՏՄԱՍԽԱՆԵՐԸ

Ստացանք հետեւեալ բաժնեգիրները՝

- Տիարք Խ. Մարգարեան Վալէփո 14. —
- » Գ. Միքայէլ. Գոալէփո 8.50
- » Կ. Յովհաննէս. Թուշա 16. —
- » Ա. Աստուր. Գոալօփա 7. —
- » Ս. Կարապետ. Մաթարիս 7. —
- » Ս. Մարտիկ. Գէօտեմէ 7. —

—Տ. ԽԱՉԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ Իպրաիմ— «Իրաւունք» թիւ 75 թիւ մէջ եղած ակնարկութիւնը ձեռք չի պատկանիր , այլ Վառայի Խաչիկ Գէորգեանին որ թերթին 18 ֆր. բաժնեգիրն իւրացուցած է :

—Տ. ՊԱՂ. ԿԱՐԱՊԵՏ Գանտիա. —
Ձեր պատկած թերթին թիւը իմացու-
ցէք որ զբեկնէք:

—Տ. ՍԱՎԱ ՊՈԼՍԵԱՆ Իսպրիւ. —
Բաժնեգրին զբեկնէք որ թերթը ըս-
տանաք:

—Տ. Գ. ԽԱՉԱՏՈՒՐ Կարապ. — Կր-
ճարեցէք Տ. Գր. Յակոբեանի:

—Տ. ԱՆՏՐԷԱՍ Բիրիզ. — Կըսպա-
սենք ձեր պարտքի առաքումին:

—ՍԱՐԳԻՍ ԲԻՆՈՅԱՆ Սուրենա. —
Ի՞նչ միջոցով կարելի է ձեզ ամօշնել,
որ ազգ. թերթի մը բաժնեգրին կը-
լելու անխղճութիւնը չունենաք: Թեր-
թը չափազործեցիք ձեր սրճարանին
յաճախորդները գոհացնելով. առանց
մտածելու գելու թէ խմբագիրը այդ
թերթը օրը օրին ձեզ զբեկնու համար
միայն նամակադրուի 6-7 ֆր. իր
քսակէն կանխիկ դրամ վճարած է:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիլիկիոյ Կաթողիկոսին ընտ-
րութիւնը տեղի ունեցած է Ատա-
նայի մէջ Ինքնակալութեան 40
ընտրողաց որոնք 54 ձայն կը ներ-
կայացնէին: Առաջին քուէարկու-
թեամբ վեց եկեղեցականներ պի-
տի ընտրուէին: Հետագայից հա-
ղորդած է Պատրիարքին թէ ա-
ռաջին քուէարկութեան արդիւնքը
հետեւեալն եղած է:

- | | |
|---|----|
| Սահակ եպիսկ. Խապանեան | 50 |
| Էրեցեան եպիսկ. (փոխա-
նորդ Երուսաղէմի) | 48 |
| Մանկուկի եպիսկ. (Ատե-
նապետ Կրօն. Ժողովոյ) | 45 |
| Հմայեակ եպիսկ. (Բերա-
յի քարոզիչ) | 44 |
| Գրիգորիս եպիսկ. (Ատե-
նապետ Կրօն. Ժողովոյ) | 30 |
| Օրմանեան եպիսկ. (Պատ-
րիարք) | 28 |

54 քուէի այս արգիւնքէն կը
տկանուի թէ ընտրողք իրենց մէջ
նեղաշնակութիւն մը պահած են.
Բարթողիմէոսի, Մեսրոպի անուն-
ները բնաւ չկան. իսկ Օրմանեան
հակառակ իր ջանքերուն լաւ ապ-
տակ մը ընդունած է, վեց բնո-
րեկներու մէջէն էն քիչքուէն շա-
հած ըլլալով:

Վերոգրեալ վեցանուն ցանկը
անմիջապէս Դրան հաղորդուած է.
Դուռը այդ անուններու մէջէն
չի սիրածները ջնջելով, սրբազը-
րուած ցանկը պիտի յանձնէ Պատ-
րիարքին որ հեռագրով անմիջա-
պէս պիտի հաղորդէ Ատանա ուր
ընտրողք վերջին ընտրութիւնը
պիտի կատարեն այդ ցանկին մէ-
ջէն միակ մէկ անձի քուէ տալով:
Շատ հաւանական է որ կառավա-
րութեան ջնջիլիքները Կրօն. Ժո-
ղովոյ անդամակները ըլլան:
Բայց ընտրողք, ինչպէս կ'ըսեալ,
ամեն պարագայի մէջ Օրմանեանը
չպիտի ընտրեն. հետեւաբար Սա-
հակ եպիսկոպոս խապանեանն է որ
Կաթողիկոս պիտի ընտրուի:

—Պոլսոյ Կրօն. և Քաղ. Ժողով-
ները հաւանած են Պուլկարիոյ
հովուութեան համար եպիսկոպոս
մը զբեկն Պատր. Փոխանորդ տիտ.
զոտով:

—Պուրկազի Տէր Կարապետ
Քահանան Պատրիարքարանէն խըն-
դրած է ուրիշ տեղ պաշտօնի կո-
չուիլ:

—Մանչեսթըր գոնուող Պէրպէր-
եան սօները 184 տնջլ ոսկի զըր-
կած են Պէրպէրեան յորեկանին
ած թիւ: Հանգէսը կիրակի օր տե-
ղի ունեցաւ, մանրամասնութիւնք
յաջորդիւ:

—Որբախնամի հրապարակային
շնորհակալեաց նամակը տեղւոյ
անձկութեան պատճառաւ յաջոր-
դին յետաձգուեցաւ:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԵԻԱ ՎԷ ՅՐԱՆՍԱ

Էվլէթի նիւսիւնիդտէ պէյան
ի թոթիկիմիդ իւզըէ Սթանպուլ ֆը-
րանսըզ սէֆարէթի միւսթէշարը
Մ. Պաքսըն գաթի պիր նօթա ի-
լէ Պապը Ալիյէ ի թմիշ օլտըղը
թէքլիֆէրի մէճիսի վիքէլա իւք
ի թթմաւնտա պիրա թէքէտիւտ
գապուլ ի թմէկէ մէճպուր օլտուշ
տըր:

Ֆրանսըզլարն Միտիլի առա-
սընա կիրմիշ օլտալարընն խապէ-
րի Սթանպուլա եթթիշսիսիտէ Եը-
տըզ սէրայընտա պէօյիւկ հէյէ-
ճան հրսս օլտուշա, Սուլթան տէր
հալ Ֆրանսանըն թէքլիֆաթընն
գապուլ իալիմէսիսի վիքէլայա
թափսիլ ի թմիշ տիր: Վիքէլա
մէճիսիսի մէճքիւր գարարը սա-
աթընտա Ֆրանսըզ սէֆարէթինէ
իսպար օլտըմը օլտալէ, գարարը
թաւտիգ իտէն իրատէնին սու-
տուրընա պէքէնիլմէքտէ օլտըղը-
նը թէքլիֆաթ պիւտիլմիշ տիր:
Բարիստէն ալընան մալիմաթա
պիւստէն, մէքքիւր իրատէնին սու-
տուրը ագապիւտէ Ֆրանսըզլար
Միտիլի թէքք իտէճէքլէր իտէ-
տէ, գապուլ օլտան թէքլիֆա
թըն ի ճրասընա պաշլաւըմասընա
տէկին զըհլըլար թիւք սուլա-
րընտան իրաք կիթմէյէճէքլէր:

—Ֆրանսըզ ասքէրինին Միտիլ-
լիլէ չըգուպ կէօմրիկլէրի գապիթ
ի թմէլէրինէ թիւքլէր թարաֆըն-
տան հիշ պիր միւսանտաթ վու-
գու պուլմամը տըր:

—Թուլօնտան «Լիւնա» վէ
«Էթէ» նամ իրի հարպ սէֆինէսի
տալի թուրք սուլարընա տօղրու
հարէքթ ի թմիշ օլտըղը թէքլի-
րաֆ պիւտիլմիշ տիր:

—Լօրէնտօնըն մաթլուպընա
գարըլըզ օլտաք իւզըէ, պիրթա-
գըմ հէվալէ սէնէտլէրի Պապը Ա-
լիտէն Մ. Պաքսա վէրիլմիշ տիր:
Իշպու սէնէտլէր թիւք կիւմրիկ-
լէրինտէն այպէ այ թէտիլէ օլ-
տուշ, 1902 փետր. 1էն 1903
մայիսէ գատար քեմալիլէն էօտէն-
միշ օլտաք տըր:

—Քիւտանիլէրին Բաթրիգի Գեր
Էմմանուէլ Թօմասըն ինթիսա-

պընը թաւտիգ իտէն իրատէնին
Ֆրանսանըն թալէպի իւզըէ, սու-
տուր ի թմիշ օլտալը Սթանպուլ
կազէթալարը տալի հաղմը տըր-
լար:

—Ֆրանսըզ տէվլէթի տօնա-
մասընն պիր զըսմըն թիւք
սուլարընա կէօնտէրմիշ վէ Պապը
Ալի իլէ գաթը միւսանտաթ ի թ-
միշ վէ պուլմուշ Եարգտա Ֆը-
րանսանըն հուգուգ ու թէքէսիլի
մուհաֆաղտ ի թմիշ մէճպուրի-
լէթ հասըլ օլտուշ օլտըղըն էլի-
լէրի վասըթասը իլէ տիկէր տէվ-
լէթլէրէ իսպար իլլէվէսի իւզէ-
րինէ, ինկիլիզ, Աստրիա վէ Մ.
Ամէրիգա տէվլէթլէրի թարաֆըն-
տան Ֆրանսանըն պու հարէքթի
թաւտիգ օլտըմը տըր: Քէզա սօն
թէքլիֆաթա կէօրէ, հէր պիր տէվ-
լէթ թարաֆընտան Ֆրանսալա
հազգ վէրիլմիշ օլտալ, շու էսնա-
տէ Ֆրանսըզլար քէմալը սէրպէս
տիլլէթ Սուլթանըն ահտնամէլէր
իլէ տէքէօհտէ ի թմիշ օլտըղը վա-
ղիֆէլէրին թանըթմաք հուրի-
լէթինէ հայիլ տիրլէր:

—Բեթրապուրկտան «Քէօնիլէ-
Յայթուշ» պէրիլէն պիր թէքլի-
րաֆ աթիւտէրի մալիմաթը վէր-
միշ տիր:

«Բեթրապուրկտա ճէրէյան ի-
տէն շայէթա կէօրէ, Էրմէնիս-
տանտա վէ Թիւրքիսըն Էվրոս
գըլմասընտաքի վիլայէթլէրինտէ
իսլահաթըն ի ճրասը խուսուսընտա
լազըմ կէլէն թէտապիլի ի թմի-
լազ ի թմէք իշիւն Բաւ վէ Ֆը-
րանսըզ տէվլէթլէրի պէյինտէ
ի թմիֆաթ հասըլ օլտուշ օլտալ,
պուլար Պէրլին ահտնամէսիսի իմ-
գալամըլ օլտն տիկէր տէվլէթլէրին
տալի քէնտիլէրինէ լէֆաթաթ
ի թմէլէրին թէքլիֆ էլլէմէք գա-
րարընտա պուլմուշալարընտան
մատա, մէքքիւր մէսլէ իշիւն
տէվլէթլէրի պիր գօնֆէրանս թէ-
ճէմմիսիսի տալէթ ի թմէք նիլէ-
թինտէ օլտըզլարը տալի ըրվա-
լէթ օլտըլօր»

Պէրլին կազէթալարը պու թէ-
լէկրաֆ միւստէրիճաթընն պազը
նօթալարընա ինանմաք իսթէմէ-
լուպ, օ կիպի պիր գօնֆէրանսըն
իլլիպապ օլտալազալըն պէ-
յան ի թմէքտէ տիրլէր:

—Սաթրազալ խալիլ Բիֆաթ
բաքս վէֆաթ ի թմիշ տիր:

—Թիւրքիա վիլայէթլէրինտէ
հէնիտէն ֆրանսըզ հալսօտ կա-
թօլիլ քիլիսէլէր վէ մանաստը-
լար ինչա ի թմէք վէ մէքթէպլէր
քիւշտա էլլէմէք իշիւն էգհէր ճի-
հէթ սէրպէստիլէթ վէրիլտիկինի
Պապը Ալի ֆրանսըզ սէֆարէթի-
նէ րէսմէն պիւտիլմիշ տիր:

ԿԻՐԻՏ

Երուան Գրալը Վիլէնտաւս իմ-
բէրութօրտան ֆէվգէլասի թալ-
թիֆլէ գապուլ օլտընտըգտան վէ
գիլաֆէթլէրտէ պուլմուշալար
սօնրա Ալիինայա ալտէթ ի թմիշ

տիր: Երուան գրալընն վէ Կի-
րիտ գօմիսէրի Բրէնս Եօրկինին
շու սօն սէլահաթլարը Կիրիտին
Երուանիսթան իլէ պիւրլէտիլմէք
մէսլէթինտէն տօլալը օլտըղը էվ-
վէլէն տալի հազըլմըլ րաթ: պի-
նապէրին շիմտի մահէլլէրինէ ալ-
տէթ ի թմիշ օլտալլէ, հազըն կիւն
տէ Կիրիտ մէսլէթինին նէ հալ
ու րէնիլ քէսպ ի թմիշ օլտըղը ան-
լաշըլաճաք տըր:

Պազը Էվրաքը հալաւտիսին վէր-
տիկի սօն մալիմաթլարա կէօրէ,
մէսլէն տօղրուտան տօղրու Կիրի-
տի Երուանիսթան իլէ պիւրլէտիլ-
մէք խուսուսընտա օլտալուպ, ա-
տալը վէ Կիրիտիլէրի պազը հէ-
նի իմթիլալար իլէ միւսթալ ի թ-
մէք ճիհէթլինտէ իմիշ:

ԹՐԱՆՍՎԱՍԱ

Ինկիլիզ հիւքիւմէթի Ճէնուպի
Ալիբիգայա եհնիտէն 16,400 առ-
քէր իմտատ հօլլամաք գարարընը
վէրմիշ տիր:

—Ինկիլիզ մէճիսի վիքէլասը
իւք ֆըրգայաթ ագաթ օլտուշա,
Մ. Չէմպլլէնէ մուսալիֆ օլտն-
լար եհնիտէն Պօլլէրի մէ սուլհ
միւզէքէրէսիսի կիրիշմէք էֆքեա-
րընա ըրար ի թմէքտէ իմիլլէր:
Մ. Չէմպլլէն վէ քէնտի թա-
րաֆտարլարը իսէ Պօլլէրի քեա-
միլէն թաւղիլ իտէնէ գատար մու-
հարէպիլի տէվաթ ի թմէք իտա-
սաընտա սէպաթ իտէլօլար:

—Պէրլինտէ Մ. Չէմպլլէնէ
գարըն չէտիտ նիւմայիլլէր օլտու:

ՍՈՆ ՀԱՎԱՏԻՍ

Սօն քէլէկրաֆլարտան միւսթիլարաճ

Էրգրուտա չէտիտ զէլլէլէ
վուգու պուլուպ, չօգ պիւսալար եը-
գըլմըլ վէ էհալի տէհէթտէ գալ-
մըլ տըր: Պ. Գօնսթան հազընէն
Սթանպուլա ալտէթ իտէճէք: Ֆը-
րանսըզ ասքէրի Միտիլլիտէն չըգ-
մըլ վէ հարպ սէֆինէլէրի Սիւրա-
յա կիթմիլլէր տիր:

—Ֆրանսանըն պիւլմիլն թէք-
լիֆլէրի գապուլ օլտըմը օլտալլէ
Թիւրքիա իլէ միւսաթիլաթը բօ-
լիթիլլէրինէ եհնիտէն պաշլա-
մըլ տըր: Մ. Գօնսթան հազընէն
Սթանպուլա ալտէթ իտէճէք: Ֆը-
րանսըզ ասքէրի Միտիլլիտէն չըգ-
մըլ վէ հարպ սէֆինէլէրի Սիւրա-
յա կիթմիլլէր տիր:

—Բեթրապուրկտան րէսմի իս-
պարաթա կէօրէ, Էրմէնիստան վէ
Մաքթիսիա իսլահաթը իշիւն
Ֆրանսա վէ Բուսիա միւլթէթի-
գէն մուսմէլէ իտէճէքլէրին տա-
լիլ չըգմըլ օլտն շայէթա թէքքիպ
օլտըլօր:

ԴԱՍԱԽՈՍ ՈՒԹԻՒՆ

ՄՍՆԱԽՈՐԱՑ

Ֆրանսերէն և Պուլկարիոյ գաս-
տանիլ փափաքողք թող դիմեն Տ. Մ.
Սատթէսեանի:

Փողոց Տիպէկ-Չէշմէ թիւ 6

Одговорникъ Н. Драгулевъ
Печатница «Важность», Варна